ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ — Մեդիատեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում

ԱՌԱՐԿԱ — Դասվար (Մայրենի, Մաթեմատիկա)

ՀԵՂԻՆԱԿ — Դավթյան Լիանա Նորայրի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ — «Ակների միջնակարգ դպրոց» <<ՊՈԱԿ>>

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3
2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ….5
3. ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ……..11
4. ՄԵԴԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ……18
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….24
6. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…..25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական հեղեղը գրավել է հասարակության բոլոր շերտերը, այդ թվում և կրտսեր դպրոցականներին: Ապրելով ժամանակակից միջավայրում՝ վանել հեռուստատեսությունը, թերթերը, ամսագրերը, կինոն, ռադիոն, համացանցը, հնարավոր չէ: Հաճախ ընտանեկան դաստիարակությունը բավարար ուշադրություն չի դարձնում, թե ինչ է նայում երեխան հեռուստացույցով, ինչ է լսում ականջակալներով, ինչ խաղեր է խաղում համակարգչով, ինչ գրական հերոսներ ու ֆիլմեր է նախընտրում: Կամ ինչու՞ դա, և ոչ մեկ ուրիշը: Առավել հաճախ այդ ոլորտում երեխան ինքնուրույն է, դեռևս չձևավորված ինքնագիտակցությամբ, և քանի որ տպավորվող է, ապա հաճախ է ենթարկվում մեդիայի ազդեցությանը:

Որպեսզի պատկերացնենք, թե ինչ հանգամանքներ են երեխայի համար կարևոր և որոնք են վախեր առաջացնում, անհրաժեշտ է իմանալ, որ աճող երեխան յուրացնում է շրջակա միջավայրը, անկախ նրանից՝ այն խաղա՞ղ է, թե պատերազմային: Երեխան մեծանալով՝ գնում է դպրոց, աստիճանաբար ծնողների հետ կապը թուլանում է, և սկսվում է դժվարությունների շրջանը դաստիարակության գործում:

Թեմայի արդիականությունը: Փոխակերպվող ներկայիս հասարակության պայմաններում հոգեբանության և հարակից այլ գիտությունների կարևորագույն խնդիրներից է համարվում հատկապես աճող սերնդի վրա զանգվածային հաղորդակցման միջոցների ազդեցության ուսումնասիրությունը: Զանգվածային հաղորդակցման միջոցների շարքում մարդու պահանջմունքների բավարարման համար առավել մեծ են մեդիայի, համակարգչի, հեռուստատեսության, գրքերի ,մեդիագրքերի և այլ հնարավորություններ: Հաշվի առնելով մեդիայի դրական ներգործության փաստերը, առօրյայում վերջիններիս ներգորոծությունից առավել կարևոր է դրանց ճիշտ կիրառումը հենց կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացում, ինչն էլ կարող է բարձրացնել նաև հատկապես այս տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը:

Ժամանակի պահանջներին համապատասխան ուսուցիչները պետք է գտնվեն անընդհատ շարժման, որոնումների, մասնագիտական և առարկայական աճի ու զարգացման գործընթացի մեջ, հակառակ դեպքում չեն կարող աշխատել հասարակության մեջ կատարվող փոփոխություններին արագ արձագանքող և հարմարվող նոր սերնդի հետ

Հետազոտության նպատակն է պարզաբանել մեդիատեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումասիրել կրտսեր դպրոցականների տարիքային և հուզական ոլորտի առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում մեդիատեխնոլոգիաների դերը:
- Բացահայտել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների վրա մեդիատեխնոլոգիաների ներգործության առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում մեդիայի ազդեցությունը կրտսեր դպրոցականների անձնային-հուզական որակների ձևավորման գործում:

Հետազոտության առարկան համակարգչի, հեռուստատեսության, գրքերի և զանգվածային հաղորդակցման այլ միջոցների ազդեցությունը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից: Աշխատանքը կազմում է 25 համակարգչային էջ:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Դրդապատճառը հոգեկան այն երևույթը (միտք, մտապատկեր , հույզ կամ դրանց համակցությունը), որը ակտիվություն է հարուցում, օրգանիզմին մղում ակտիվ գործունեության [10, էջ 50]: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որ վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենն ապահով է, ծանոթ հասկանալի, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Կրտսեր դրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում հայտնվում է կամածինության ձևավորումը [1, էջ 38]:

Կրտսեր դպրոցական տարիքն անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է և համարվում է 6-ից 9-10 տարեկանը: Այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում մարմնի բոլոր օրգաններում և հյուսվածքներում, արագորեն ամրանում են նրանց մկաններն ու հոդակապերը: Կրտսեր դպրոցական տարիքում զգալիորեն ամրապնդվում է ոսկրա-մկանային համակարգը, համեմատաբար կայուն է դառնում սիրտ-թոքային համակարգի աշխատանքը, իսկ նյարդային գրգռման ու արգելակման գործընթացները մեծ չափով հավասարակշռված են դառնում: Այս ամենը նշանավորվում է նոր ուսումնական գործունեությամբ, որը երեխայից ոչ միայն զգալի մտավոր լարվածություն, այլ ֆիզիկական մեծ տոկունություն է պահանջում:

Ընդունվելով դպրոց՝ երեխան նոր դիրք է զբաղեցնում հասարակության մեջ, նրան առաջադրվում են պարտականություններ, կապված ուսումնական գործունեության հետ: Հարազատները, ծնողները, ուսուցիչները, և անգամ օտարները երեխայի հետ շփվում են

ոչ միայն որպես յուրահատուկ մարդու հետ, այլ նաև որպես մարդու, որը իր վրա է վերցրել սովորելու պարտավորությունը: Կրտսեր դպրոցական տարիքում առկա է սոցիալական հարաբերությունների 2 ձև՝ երեխա- մեծահասակ և երեխա- երեխաները: Երեխա-մեծահասակ համակարգը տարբերակվում է. Երեխա-ուսուցիչ, երեխա-մեծահասակ, երեխա-ծնողներ, երեխա-երեխաներ:

Ուսումնական գործունեությունը մարդու գործունեության այն հատուկ տեսակն է, որի նպատակը որոշակի գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, վարքի և գործունեության ձևեր սովորելն է: Ուսումնական գործունեությունը կամ ուսումը իրագործվում է իմացական գործընթացների օգնությամբ: Ուսումնական գործոնեության մեջ առանձմացնում են մոտիվացիոն, իմացական, կատարողական և վերահսկման կողմերը: Տարբերում են ուսումնական գործունեության մի շարք տեսակներ.

- Ուսումնական գործունեություն, որն իրագործվում է ըստ զուգորդական սկզբունքի
- Ինստրումենտալ պայմանական կապերի միջոցով իրագործվող ուսումնական գործունեություն
- Խոսքային ուսումնական գործունեություն
- Ուսում խնդիրներ լուծելու միջոցով [10, էջ 204] :

Դպրոց ընդունվելով՝ երեխայի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումնական գործունեությունը: Ըստ ակադեմիկոս Ա. Լեոնտևի, առաջատար է այնպիսի գործունեությունը, որի ընթացքում տեղի է ունենում հոգեկան հիմնական գործընթացների և անձնավորությոնունների էական հատկությունների ձևավորումը, որոնք և բնորոշում են տարիքային զարգացման տվյալ փուլի գլխավոր նվաճումը: Ըստ այդմ էլ՝ կրտսեր դպրոցականի «Ուսումնական գործությունը հասարակայնորեն նշանակի, պարտադիր, գնահատելի գործունեություն է, և գնահատելով այն սկզբունքորեն տարբերվում է գործունեության բոլոր այլ տեսակներից, որոնցով առաջ երեխան զբաղվում էր նախադպրոցական հիմնարկներում կամ տանը» [5, էջ 19]:

Դպրոցական ուսուցման առաջին հիմնական առանձնահատկությունն այն է, որ դպրոց ընդունվելով՝ երեխան սկսում է իրականացնել թերևս առաջին անգամ իր կյանքում հասարակականորեն գնահատելի գործունեություն՝ ուսումնական գրծունեություն, որը նրան դնում է բոլորովին նոր դիրքում: Լ. Բոժովիչը, երբ իր հետազոտությունների հիման վրա եզրակացնում է, թե «դպրոցական համակարգված ուսուցման համար պատրաստվածությունը որոշվում է ամենից առաջ երեխայի մեջ հասարակականորեն նշանակալի և հասարակականորեն գնահատելի գործունեության միտումի ձևավորմամբ» [16, էջ 24]:

Համակարգված դպրոցական ուսուցման երկրորդ էական առանձնահատկությունն այն է, որ այն պահանջում է պարտադիր կարգով կատարել բոլորի համար միատեսակ կանոնների մի ամբողջ շարք, որոնց ենթակա է նաև աշակերտի վարքը դպրոցում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում:

Դպրոցական համակարգված ուսուցման երրորդ էական առանձնահատկությունն այն է, որ դպրոց ընդունվելուց սկսվում է գիտության համակարգված կամ տվյալ գիտության բնագավառի, տվյալ ուսումնական առարկայի ուսումնասիրությունը տրամաբանությամբ:

Դպրոցական համակարգված ուսուցման չորրորդ էական առանձնահատկությունն այն է, որ դպրոցական ուսուցմանն անցնելիս երեխան պետք է արմատականորեն փոխի իրեն դաստիարակող չափահասների հետ ունեցած հարաբերությունների ամբողջ համակարգը:

Այդ առանձնահատկությունները բնութագրելուց հետո Էլկոնինը տալիս է ուսումնական գործունեության հետևյալ սահմանումը. «Ուումնական գործունեությունը նպատակաուղղված գործունեություն է, որի բովանդակությունը կազմում է գիտական հասկացությունների ոլորտում եղած գործողությունների ընդանրացված եղանակների յուրացումը» [5, էջ 72]:

Կրտսեր դպրոցականներն ունեն իրենց տարիքին հատուկ մի քանի առանձնահատկություններ, որոնք նախադպրոցական տարիքի օրգանական շարունակությունն են: Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր

են: Նրանք փորձում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ծնողներին ու ծանոթներին: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմքը:

Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է, ուսուցչի հուզիչ խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցում են, շեղում նրանց ուշադրությունը:

Խոսքը պայմանական բարդ գրգռիչ է, որի շնորհիվ վերլուծման, համադրման և ընդհանրացման են ենթարկվում արտաքին և ներքին միջավայրից ստացած բազմապիսի գրգիռները:

Կրտսեր դպրոցականը դեռևս դժվարանում է բանավոր և գրավոր խոսքից լրիվ չափով օգտվել: Խոսքի տարբեր ձևերի զարգացումը տեղի է ունենում նրա մտածողության զարգացման հետ անխզելի կապի մեջ , միասնաբար:

Երեխան առաջին դասարան ընդունվելիս ունենում է առավել կամ նվազ չափով զարգացած բանավոր խոսքի հմտություններ:

Դպրոցը երեխայի առջև դնում է խոսքի զարգացման նոր պահանջներ՝ դասի ժամին պատասխանը պետք է լինի հակիրճ,հստակ իմաստով , արտահայտիչ, հաղորդակցման ժամանակ խոսքի կառուցվածքը պետք է համապատասխանի մշակույթում ձևավորված նորմերին:

Խոսքային կուլտուրայի էությունը կայանում է ոչ միայն նրանում ,որ երեխան ճիշտ և տեղին կարողանա արտասանել շնորհակալական խոսքեր: Այսպիսի երեխայի նկատմամբ հասակակիցները կարող են ունենալ գերազանցության զգացում:

Հաղորդակցումը դառնում է սոցիալական հարաբերությունների յուրահատուկ դպրոց: Երեխան դեռ անգիտակցորեն բացահայտում է իր համար հազորդակցման

տարբեր ոճերի գոյությունը: Հաճախ երեխան բախվում է ֆրուստրացիոն հաղորդակցման քայքայման խնդրի հետ:

Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունն ընդօրինակումն է: Նրանք շատ են սիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը: Նրանց ընդօրինակման առաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: Ցավոք երեխանն ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափասները պետք է խուսափեն բացասկան վարքի ձևերից:

Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների և ուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում են բացասական, հուզական վիճակներ, հոգեկան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, կամային վճռականությունը և պարտքի զգացումը:

ՈՒսումնասիրելով առաջին դասարանցու հոգեբանությունը՝Մ. Վոլոկիտինը բացահայտել է մի շարք դժվարություններ.

- ռեժիմի հետ կապված դժվարություն. մանկապարտեզում դաստիարակները վերահսկում են երեխայի գործողությունները մինչև կեսօր,իսկ հետո անհետանում է այդ վերահսկողությունը.
- փոխվում է երեխայի առաջատար գործունեությունը. խաղին փոխարինում է ուսումնական գործունեությունը.
- փոխվում է վերաբերմունքը ընկերների նկատմամբ , դեռևս ձևավորված չէ փոխօգնության զգացումը.
- փոխվում է վերաբերմունքը մանկավարժների նկատմամբ, ժամանակ է պետք, որպեսզի 1-ին դասարանցիները պատշաճ հարաբերություններ ստեղծեն ուսուցիչների հետ .

- արմատապես փոխվում է 1-ին դասարանցիների հոգեվիճակը.6 տարեկանները մանկապարտեզում համրվել են ավագ, իսկ հիմա դպրոցում իրենք ամենափոքրերն են և այլն:

Ակադեմիկոս Վ. Դավիդովը,անդրադառնալով կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման հիմնահարցին,նկատում է, որ առաջին դասարանցիները դժվարություններ են կրում ուսումնական տարվա վերջին շրջանում: ՈՒսումնական տարվա սկզբներին « նրանք հաճույքով դպրոց էին շտապում դասերից բավականին, պատրաստակամությամբ էին ցանկացած վարժություններ կատարում,հպարտանում էին ուսուցչի տված գնահատականներով: Այս ամենի մեջ իր արտահայտությունն էր գտնում գիտելիք ձեռք բերելու նրանց ընդհանուր պատրաստակամությունը» [13, էջ91]:

Կրտսեր դպրոցական տարիքում էականորեն փոխվում է երեխայի դերը՝ հասարակության մեջ: Դժվարանում է նրա գործունեությունը, փոխվում է երեխայի իմացական պահանջմունքները, առաջ են գալիս նորերը և մեծանում է դրանց շրջանակը: Փոխվում են մանկական խաղերը, խաղի կանոնները: Խաղը կրում է կատարելագործված բնույթ: Նոր ձեռք բերած գիտելիքի ու փորձի շնորհիվ բարդանում են խաղերի բովանդակությունը և կառուցվածքը: Առարկայական խաղերը կառուցողական բնույթ են կրում, լայնորեն կիրառում են նոր գիտելիքներ բնագիտական առարկաներից, աշխատանքի ուսուցման ժամերից: Այս տարիքում անհրաժեշտ է երեխային ապահովել զարգացնող խաղերով և հետևել, որ երեխան ժամանակ ունենա այդ խաղերով զբաղվելու:

Խաղը կրտսեր դպրոցական տարիքում զբաղեցնում է երկրորդ տեղն ուսումնական գործունեությունից հետո:

Խաղը գործունեության տեսակ է, որի դրդապատճառը ոչ թե նյութական արդյունք և օգուտ ստանալն է, այլ հաճելի ապրումները, ընդունակությունների մարզումը, սոցիալական կապերի ստեղծումը և շրջապատող աշխարհի վրա ներգործելու ձգտումը: Խաղը կարող է ընթանալ ինչպես իրական, այնպես էլ երևակայական իրադրություններում: Խաղի տարբեր տեսակները հսկայական նշանակություն ունեն երեխայի օնտոգենետիկ զարգացման և հոգեկան հասունացման ապահովման համար:

Խաղալու հակումը ունի ժառանգական ծրագրվածություն, դիտվում է նաև բարձրակարգ կենդանիների ձագերի վարքում [10, էջ 93]:

Ուսուցիչը կարող է նաև հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները [1]:

ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մարդ–մեքենա փոխհարաբերության մասին մարդկությունը մտահոգվեց այն պահից, երբ մեքենաները, ներխուժելով մեր առօրյան, սկսեցին փոխարինել մեզ արտադրության տարբեր փուլերում:

Վերջին տարիներին համակրգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը: Համակրգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ , դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներիվ օգտվողների թվի աճի և համակարգչային համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների:

Բոլոր մարդիկ ունեն կրթության իրավունք, այդ թվում՝ գիտելիք ստանալու: Սա նշանակում է, որ բոլորի համար պետք է առցանց մատչելի լինեն կրթությունը և

մշակութային, գիտական, դասախոսական և այլ նյութերը պաշտոնական լեզուներով: Նման մատչելիությունը կարող է պայմանավորված լինել որոշակի պայմաններով՝ կապված իրավատերերին իրենց աշխատանքի համար վարձատրելով: Պետք է նաև ազատորեն մատչելի լինեն պետական ֆինանսավորմամբ գիտահետազոտական և մշակութային աշխատանքները Համացանցի հանրային տիրույթում, եթե այդպիսիք կան: Որպես համացանցի և այլ մեդիա գրագիտության բաղադրիչ՝ մատչելի պետք է լինի թվային կրթությունը և գիտելիքները, որպեսզի կարողանան համացանցում իրականացնել ձեր իրավունքներն ու ազատությունները: Սա ներառում է այնպիսի հմտություններ, որոնք թույլ կտան ընկալել, օգտագործել և աշխատել բազում համացանցային գործիքներով: Պետք է քննադատաբար վերլուծելու այն նյութի, կիրառական ծրագրերի և ծառայությունների ճշգրտությունն ու արժանահավատությունը, որը մատչելի է: Որպես համացանցի և մեդիա գրագիտության բաղադրիչ՝ օգտատերերի համար պետք է մատչելի լինի թվային կրթությունը և գիտելիքը, որպեսզի նրանք կարողանան համացանցով իրականացնել իրենց իրավունքներն ու ազատությունները: Տեխնոլոգիան չեզոք չի լինում: Մարդկային պատմությունը բազում օրինակներ ունի այն մասին, թե ինչպես են տեխնիկական նվաճումները որոշ մարդկանց, նույնիսկ միությունների ու երկրների տվել իշխանություն և հզորություն, մի կողմ թողնելով այլոց: Համացանցն, այս իմաստով, բացառություն չէ: Դրա տարածման շնորհիվ տեղի ունեցավ հարստությունների և իշխանության նշանակալի վերափոխումներ և՛ առանձին մարդկանց կյանքում, և՛ ողջ աշխարհով մեկ: Այն ազդեցությունը, որ համացանցն ու տեղեկատվական հեռահաղորդակցային տեխնոլոգիաներն ունեցան իշխանության բաշխման ու զարգացման վրա, առաջ է բերել բազմաթիվ հարցեր, օրինակ՝ -համացանցի- ՏՀՏ զարգացմամբ արագացված փոփոխություններն ի՞նչ ազդեցություն են ունենալու Հյուսիսի և Հարավի միջև արդեն գոյություն ունեցող պառակտման վրա: Համացանց- ՏՀՏ-ն այդ ճեղքը կմեծացնի, թե՞ կնվազեցնի այն. -զարգացող երկրները ե՞րբ և ինչպե՞ս կարող են հասնել զարգացած արդյունաբերական երկրների տեղեկատվական տեխնոլոգիաների մակարդակին:

Փոխազդեցության ձևը կապված է այն միջոցներից, որոնք օգտագործում են մարդկանց հասարակական հաղորդակցման գործունեության ոլորտներում որպես արտաքին միջավայրի, այլ մարդկանց հետ փոխգործունեության երեք ծրագրերից մեկը: Մարդու գործունեության ոլորտները դիֆերենցվում են, առաջին հերթին, կապված մարդու կենսագործունեության ուղղվածության կամ ընդհանուր նպատակի ներսում՝ սեփական անձի ստեղծման և ինչ-որ բանի ստեղծում իր անձից դուրս, իր կամ ուրիշների համար՝ կարելի է առանձնացնել նպատակների 3 խումբ [8]՝

- Նյութական և բարոյական մշակույթի արժեքների ստեղծում,
- Գիտելիքների ընդունում , կուտակում,
- Ընկալում և մտքերի փախանակում:

Երբ խոսքը վերաբերվում է ինֆորմացիայի փոխանցման ձևերին, ապա առանձնացնում են անմիջական անձնային հաղորդակցում, համընդհանուր և ինքնաբուխ: Համընդհանուր, որին այլ կերպ անվանում են նաև հիմնական, դա հատուկ պատրաստված հայտարարությունների սիստեմատիկ տարածումն է տեխնիկական միջոցների օգնությամբ, որոնցից են ռադիոն , հեռուստատեսությունը, թերթը և համացանցը:

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել , այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ:

Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորոցնել սովորել:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել աշակերտին ապրել տեղեկատվական աշխարհում: Այդ նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառում անհրաժեշտություն է դառնում:

Մեդիատեխնոլոգիաները ինֆորմացիան մատուցում են զանազան ձևերով և հենց դրանով ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ են դարձնում: Ժամանակի խնայողությունը անհրաժեշտ է նյութի ուսումնասիրության համար միջինում կազմում է 30 տոկոս, իսկ ձեռք բերած գիտելիքները պահպանվում են հիշողության մեջ ավելի երկար:

Մեդիան ազդում է հասարակության վրա և պարտադրում գաղափարական հատուկ օրինակներ:

Ըստ գիտնականների ներկա ժամանակաշրջանում, մարդ արարածը փորձում է ոչնչացնել ավանդական հարաբերությունները: Մեդիան նրան համոզել է, որ ընտանեկան, դրացիական ու բարեկամական հարաբերությունները հին են և ոչ պիտանի, հասարակական կյանքի նոր օրինակները որոշում են լրատվամիջոցները :

Այդ շրջանում, մտային կուռքեր են երևան գալիս, խամրում է մշակույթը, և մեդիատեխնոլոգիաները լրացնում են ընտանիքից հեռու, մթագնության մեջ մնացած անհատի մենությունը:

Փոխվել է հասրակության ավանդական մշակույթային դիմագիծը:

Մարդիկ մերմիկ զրույցի փոխարեն, որը կարող է օգնել հուզական կապերի ամրապնդմանը, կապ են հաստատում էլեկտրոնային ապրանքների հետ և մենության մեջ հեռուստատեսային կամ արբանյակային հաղորդումներ են դիտում:

Մեդիան մեծ դեր է ունեցել երիտասարդների մոտ կոպտության ու ագրեսիվության տարածման մեջ: Քանզի գեղեցիկ ու գունազարդ գովազդներով, հանգիստ ու վայելուչ կյանք են պրոպագանդում, իսկ դա այն դեպքում, երբ դրանք հասանելի են ոչ բոլորի համար:

Արդյունքում, անջրպետ է առաջանում նպատակի և ձեռքբերման միջոցների միջև և անհատի մոտ զրկվածության զգացում է առաջանում, ինչի հետևանքն էլ ագրեսիվությունն ու կոպտությունն է :

Մյուս կողմից, դետեկտիվ ֆիլմերի ցուցադրումը, բացասական հույզեր է առաջացնում: Անգամ սպանությունների և հանցագործության միջոցների մասին

լուրերի հրապարակումը, հասարակության մոտ այդ միջոցների տարածմանը կարող է հանգեցնել:

Մեդիաների պատճառով, ծավալվում են ծնողների ու երեխաների միջև հակադրություններն ու բախումները, մեծանում է ընտանեկան բռնությունների և ամուսնալուծությունների թիվը:

Անվստահելի լրատվամիջոցների մուտքը մեր կենցաղ, վտանգավոր է ինչպես օտարականը կարող է սպառնալ մեր անվտանգությանը: Օտար տարրն ունի ՝ երազանքն իրողությունից զանազանելու հարցում մեր կարողությունը սահմանափակելու պարտականություն:

Կրտսեր դպրոցում մեդիատեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորեն չի փոխում դասի ընթացքը, նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմանական փուլերը, փոխվում են միայն դրանց բնութագրերը:

Մեդիաներկայացման կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակրգված, վերլուծական մտածողությունը:

Բացի դրանից, մեդիաներկայացման օգնությամբ կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման զանազան ձևեր՝ֆրոնտալ, խմբային և անհատական:

Մուլտիմեդիա շնորհանդեսը , այդպիսով , ավելի օպտիմալ և արդյունավետ է համապատասխանում դասի երեք միասնական դիդակտիկ նպատակներին.

- Կրթական առումով՝ սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը, ուսումնասիրության օբյեկտների կապերի և հարաբերությունների ըմբռնումը
- Զարգացման առումով՝ սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտեսիվացումը
- Դաստիարակչական առումով՝ գիտական աշխարհայացքի ձևավորում, ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում:

Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործել՝

1.Թեմայի նշման համար

- Դասի թեման ներկայացված է սլայդների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:

2.Որպես ուսուցչի բացատրությունների ուղեկից

- Կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիա կոնսպեկտ- շնորհանդեսներ, ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր , գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ:

3.Որպես տեղեկատու – ուսուցողական ձեռնարկ

- Ուսուցման մեջ այսօր հատուկ շեշտադրում է դրվում սովորողի ինքնուրույն գործունեության վրա: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է ցույց տալիս:

4.Գիտելիքների ստուգման համար

- Համակարգչային թեսթավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Թեսթերը կարող են լինել հարցաշարերի տարբերակով, որոնց ատասխանները սովորողը գրառում է կամ հատուկ բլանկի վրա:

Կարելի է տարբերակել այս տեխնոլոգիայի հետևյալ առանձնահատկությունները.

- Կավիճով գրված պատկերի որակը չի կարող համեմատվել էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ :
- Գրատախտակի և կավիճի օգնությամբ դժվար է և անհարմար տարբեր գործիքների օգնությամբ բացատրել աշխատանքը:
- Շնորհանդեսի ներկայացման ժամանակ , նույնիսկ պրոյեկտորի օգտագործման դեպքում , սովորողի աշխատանքային տարածքը բավականին լավ լուսավորված է:

- Տեսանելի մակարդակի բարձրացում դասի ժամանակ :
- Դասի արդյունավետության բարձրացում :
- Միջառարկայական կապեր հաստատում :
- Ստեղծող և ՏՀՏ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն հատկացնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությունը , որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա :

Փոխվում է վերաբերմունքը անհատական համակարգչի նկատմամբ: Երեխաները սկսում են ընկալել այն որպես ունիվերսալ գործիք մարդկային գործունեության ցանկացած բնագավառի աշխատանքի համար, այլ ոչ թե որպես գործիք՝ խաղալու համար:

Կրտսեր դպրոցում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը ՏՀՏ-ների օգտագործմամբ նկարագրված մոդելով թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետության բարձր մակարդակի մասին, որը ենթադրում է իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողների ուսուցման կազմակերպման ձևերի, բովանդակության, մեթոդների փոփոխման երկար և շարունակական պրոցես է, այն սովորողների, ովքեր ապրելու և աշխատելու են անսահմանափակ ինֆորմացիայի մուտքի պայմաններում:

Այսպիսով, մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողնրի ստեղծագործական զարգացմանը:

Շնորհանդեսը հնարավորություն է տալիս ուսուցչին՝

- Պատկերավոր ներկայացնել
- Ամրապնդել նոր նյութի հաղորդման ընթացքը
- Կարգավորել ներկայացվող տեղեկատվության ծավալն ու արագությունը անիմացիայի շնորհիվ
- Մեծացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը

Շնորհանդեսը հնարավորություն է տալիս սովորողներին՝

- Պատկերավոր ներկայացնել ուսումնական նյութը
- Դարձնել դասը առավել հետաքրքիր
- Նոր նյութի հաղորդման պրոցեսի ինտեսիվացումը

Մեդիատեխնոլոգիաների արդյունավետությունը կրտսեր դպրոցում.

Ինչպես նշում են կրտսեր դպրոցականները, նրանց համար մեդիադասերը՝ հասկանալի է, հրաշալի:

Գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքների բազմազան ձևեր կրտսեր դպրոցում անցկացնելու համար: Համակարգիչը դասի բոլոր փուլերում և բոլոր առարկաների ժամանակ առկա է, իհարկե պետք է հաշվի առնվի յուրաքանչյուր տարիքի նորմերը:

ՄԵԴԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Այսօր արդեն անհնար է պատկերացնել ժամանակակից քաղաքակրթությունն էկրանային մշակույթից դուրս, որը առաջացել է ինչպես ինֆորմացիայի նոր միջոց, որը փոխել է աշխարհի պատկերը և մարդու ընկալման միջոցները և պայմանները: Հանդես գալով որպես 21-րդ դարի անձի զարգացման ինֆորմացիայի միջոց, էկրանային մշակույթը ընդգծում է զանգվածային կոմունիկացիաների միջոցների կարևոր դերը ժամանակակից երասարդների կյանքում, որոշում է ժամանակակից մասնագետի բարոյական բնութագիրը, մեծ ազդեցություն է ունենում մասնագիտական- կոմունիկատիվ գործունեության արդյունավետությունը [20]:

Տեղեկատվական հեղեղը գրավել է հասարակության բոլոր շերտերը, այդ թվում և կրտսեր դպրոցականներին: Ապրելով ժամանակակից միջավայրում՝ վանել հեռուստատեսությունը, թերթերը, ամսագրերը, կինոն, ռադիոն, համացանցը, հնարավոր չէ: Հաճախ ընտանեկան դաստիարակությունը բավարար ուշադրություն չի դարձնում, թե ինչ է նայում երեխան համակարգչով, ինչ է լսում ականջակալներով, ինչ խաղեր է խաղում, ինչ գրական հերոսներ ու ֆիլմեր է նախընտրում: Կամ ինչու՞

դա, և ոչ մեկ ուրիշը: Առավել հաճախ այդ ոլորտում երեխան ինքնուրույն է, դեռևս չձևավորված ինքնագիտակցությամբ , և քանի որ տպավորվող է, ապա հաճախ է ենթարկվում Մեդիայի ազդեցությանը: «Երեխայի ազատությունը չի նշանակում բարձիթողի վիճակ, ճիշտ հակառակը՝ ազատության ճիշտ ընկալումը մեր ֆանտազիաների փոխարեն երեխայի իրական պահանջմունքներն է հանգեցնում երեխայի մասին իսկական և իրական հոգատրության: Մեր ժամանակակից երեխան օգտվում է միայն ֆիզիկական ազատությունից» [9, էջ 21]:

20-21-րդ դարում ապրող մարդու կյանքի բոլոր ոլորտներն են ներխուժել նորագույն տեխնոլոգիաները. Այս բոլոր տարրերն էլ մեծ նշամակություն ունեն անձի արժեքային համակարգի ձևավորման և սոցիալականացման գործում:

Ժամանակակից հասարակության մեջ մարդը գտնվում է տեղեկույթի անընդհատ հոսքի ազդեցության տակ: Այդ պատճառով էլ 21-րդ դարը հաճախ անվանում են «տեղեկատվական տեխնոլոգիաների դար»: Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը ավելի ակտուալ է դարձնում մեդիակրթության ինտենսիվ զարգացումը ժամանակակից պայմաններում:

Յուրաքանչյուր մարդու կյանքում մեծ դեր է խաղում մեդիան՝ ձևավորելով արժեքներ, սոցիալական նորմեր, վարք, կյանքի սցենարներ և աշխարհի ամբողջական պատկեր: Միաժամանակ մեդիատեղեկույթի սպառումը դառնում է ժամանակակից մարդու գործունեության ինքնուրույն տեսակ:

Իսկ ի՞նչ է մեդիան: Մեդիան զանգվածային հաղորդակցման միջոցներն է, նրա հիմնական նպատակը նոր սերնդին տեղեկատվական նոր պայմաններում ապրելուն պատրաստելն է, այն սովորեցնում է անհատներին տեղեկությունը մեկնաբանել և տեղեկություն ստեղծել: Ըստ մշակութաբան Բիբլերի ՝ կրթված մարդը վերածվում է մշակութակիր մարդու, ում համար կարևոր են ոչ թե պատրաստի գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այլ դրանց հղկման ձևավորման մշակույթը, գիտելիքը փոխելու ճանապարհների իմացությունը, կարողություններն ու ավելացնելու կարողությունները

Հաշվի առնելով զանգվածային մեդիայի դերը՝ հետազոտողները և հասարակությունը ընդգծում են կրթական բոլոր աստիճաններում մեդիակրթության անհրաժեշտությունը:

Երեխաների արժեքային համակարգը դեռևս այնքան չի զարգացել, որ համապատասխան ընկալի ցուցադրվող երևույթը: Հաճախ էկրանին ցուցադրված որևէ պատմություն իր ազդեցությունն է թողնում կրտսեր դպրոցականի հուզական ապրումների վրա: Նրանք հեշտ են ընկալում ցանկացած հերոսի կամ հաղորդավարի վարքը: Բայց ցավոք տեղեկատվության մեջ կան նեգատիվ տարրեր, որոնք կարող են ստանալ երեխաները՝ սեղմելով կոճակը կամ բացելով համացանցը: Երեխաների այդ վարքը և հուզական այդ վարքը ավելի շուտ նկատում են ծնողները: Բազմաթիվ ծնողներ անհանգստացած են երեխայի վարքի վրա, հեռուստատեսության և զանգվածային այլ լրատվական միջոցների թողած ազդեցությամբ:

Ինչպես անել, որ այդ դժվար իրավիճակում չմթագնել երեխայի գիտակցությունը, չփչացնել նրա հոգեկանը, չվնասել նրա ֆիզիկական առողջությունը: Այս և նմանատիպ բազմաթիվ իրավիճակներ հիմք են հանդիսանում կրտսեր դպրոցականի ոչ նորմալ վարքի և հուզական ապրումների վրա:

Կրտսեր դպրոցականի բնորոշ գծերից մեկը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը, վառ գույները,, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում են նրանց ուշադրությունը, իսկ դիտած սարսափ ֆիլմերը և ագրեսիվ գործողություններով հաղորդումները ահաբեկում և խորը նստվածք են թողնում երեխայի դաստիարակության վրա [12, էջ 146]:

Ժամանակակից ինֆորմացիայի հեղեղը դարձել է երեխայի անձնային հատկությունների ձևավորման գործոն: Իր կյանքի առաջին տարիներից սկսած նա հայտնվում է ինֆորմացիայի դաշտում, որտեղ արդեն կապ է հաստատում

հաղորդակցվելով: Առաջանում է ինֆորմացիոն միջավայրի և աճող սերնդաարժեքային կողմնորոշիչների կառույցի միջև փոխազդեցություն:

Կրտսեր դպրոցականները սովորում են բռնություն կիրառել, փչացնում են տեսողությունը, վատնում են իրենց ժամանակը, մյուս կողմից կրթական, համակարգչային խաղերի, մեդիադասերի, ծրագրերի օգնությամբ դաստիարակվում և իրենց աշխարհայացքն են զարգացնում՝ բացելով կյանքի նոր հորիզոններ: Այս մշակույթը հնարավորություն է տալիս ծանոթանալու նոր մարդկանց այլ մշակույթների հետ:

Վիճակագրությունը վկայում է, որ մանկական հաղորդումները զբաղեցնում է եթերային ժամանակի մոտ 5%-ը, այն դեպքում, երբ 5-10 տարի առաջ կազմում էր 30%-ը: Այսինքն՝ մնացած ժամանակ երեխաները դիտում են նույն հաղորդումները, ինչը մեծահասակները:

Ցուցադրվող հեռուստահաղորդումները՝ բռնության բովանդակությամբ, ու սարսափ ֆիլմերը երեխային դարձնում են դաժան, ագրեսիվ [2, էջ 197]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցահասակ երեխաները հեռուստացույցի առջև անցկացնում են օրական 3-4 ժամ, ինչը հավասար է 5 դասաժամի: Նրանք այդ ժամերի ընթացքում տեսնում են բռնության և սպանության 3 տեսարան, որի մեջ կան հասարակության կողմից չարդարացվող վարքագծեր: Այդ ամենն արդյոք ազդեցություն չի ունենալու կրտսեր դպրոցականի գիտակցության և նրա հուզական ոլորտի վրա: Չէ՞ որ դպրոցն ավարտելուց հետո երեխան դիտած կլինի մոտ 8000 սպանություն և 10000 բռնության տեսարաններ: Եվ այսպես նման տեսարանների դիտումը 7-8 տարեկան հասակում կարող է կանխորոշել 17-19 տարեկանում: Այդ պատճառով անհրաժեշտ է ծնողներին խորհուրդ տալ հետևել, թե ինչ են տեսնում, ինչ են լսում, ինչ է ցուցադրում մեդիան: Պետք է ամբողջ ընտանիքով սահմանափակել կամ կրճատել հեռուստացույցի և համակարգչի մոտ անցկացրած ժամերի քանակը, և ավելի արդյունավետ անցկացնեն դրանք:

6-7 տարեկան երեխան, հեռուստացույց նայելով, ավելի խորն է ընդունում ինֆորմացիան, ուրախության ու վախի ապրումներ է ունենում, նրա հոգեկանը կարող է գտնվել ուժեղ գրգռման կամ արգելակման մեջ:

Ամբողջ աշխարհի հետ շփվելով էկրանի միջոցով՝ նա իր համար գտնում է ինչ-որ արժեքավոր բան, այդ թվում և իր գոյության իդեալը: Որոշ կրտսեր դպրոցականների համար նրանք գերմարդիկ են, համարձակ ոստիկաններ, հասարակական–քաղաքական գործիչներ, իսկ մյուսների համար՝ հանրահայտ կինոդերասաններ, սպորտի վարպետներ, մանկավարժներ: Իր իդեալին նա վստահում է, նրա խոսքերը, գործողությունները ճշմարտություն է համարում և սկսում է հետևել նրա սկզբունքներին: Այդպիսի իդեալի ազդեցությունը էկրանից մեծ ներշնչանք է պարգևում: Սա չի նշանակում, որ պետք է կրտսեր դպրոցականին հեռու պահել ցուցադրվող մեդիայից, ուղղակի պետք է վերահսկել, թե ինչ է նայում երեխան:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից պայմաններում կրտսեր դպրոցականի դրսևորած հուզական վարքի վրա ազդեցություն է թողնում նրանց կողմից ստացած տեղեկատվությունը: Երեխաները դառնում են ագրեսիվ և այդ ագրեսիվությունը տեղափոխում են դպրոց՝ ագրեսիվ վերաբերմունք են ցուցաբերում ուսուցիչների և ընկերների նկատմամբ: Մի կողմից էլ ժամերով նստելով համակարգչում եղած խաղերի դիմաց՝ վնասի տակ է դնում տեսողությունը՝ ուսումնական ոչ մի հաղորդում չդիտելով և ոչ մի բանով չնպաստելով իր իսկ գիտելիքների, կարողությունների արժեքային համակարգի զարգացմանը. «Ողջ աշխարհում յուրաքանչյուր երրորդը վատ է տեսնում»: Պետք է դիպուկ օրինակների միջոցով բացատրել այն վնասները, որ կտան կրտսեր դպրոցականին մեդիայի չարաշահումը: «Ըստ Վիգոտսկու և նրա հետևորդների կանոնավոր ուսուցումը կարող է և իսկապես ազդում է երեխայի մտավոր զարգացման ու դաստիարակության վրա: Ըստ նրանց համապատասխան կրթական միջավայրի և

որոշակի նյութերի ապահովումը բավական չէ այդ զարգացումը խթանելու համար» [7, էջ 336]:

Խորհուրդ ծնողներին և ուսուցիչներին.

- Ձևավորել բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անհատ, որը կբավարարի հասարակական պահանջներին:
- Շատ ցավալի է, որ ո՛չ պետականորեն, ո՛չ ընտանիքում չի որոշված, թե երեխան ինչքան ժամանակ պետք է անցկացնի հեռուստացույցի առաջ: Կարգավորեք ինքներդ:
- Սոցիալական փորձը ցույց է տվել, որ երեխայի շարունակական գտնվելը էկրանի առաջ, փոխադարձ կապված է նրա հուզական ոլորտի, նրա ինտելեկտուալ հնարավորությունների, ֆիզիկական տվյալների, այդ թվում տեսողության վատթարացման հետ:
- Այդ գործընթացը կարգավորող հիմնական մեթոդները կարող են լինել զրույցը այլ մանկավարժների, մանկական հոգեբանների հետ՝ այս կամ այն հաղորդման վնասակարության կամ օգտակարության մասին: Անձնական կամ հասարակական օրինակով երևույթի դրական և բացասական կողմերի ցուցադրում: Խաղերի ձևով, կարող է լինել դիդակտիկ, զարգացնող, միաժամանակ դաստիարակող բնույթի համակարգչային կամ հեռուստատեսային կրթական ծրագրեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով կրտսեր դպրոցականների տարիքային և հուզական ոլորտի առանձնահատկությունները, պարզելով մեդիատեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների անձնային որակների ձևավորման գործում, կատարել ենք հետևյալ եզրակացությունները.

Կրտսեր դպրոցական տարիքի՝ 6-10 տարեկան երեխան դպրոցում ընգրկվում է պատասխանատու հարաբերությունների համակարգ, որը նրան ուղղորդում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխայի դպրոցի և ուսման, ուսուցչի և ինքն իր նկատմամբ հարաբերություններում արտահայտվող անհատական պատրաստվածությունը ենթադրում է երեխայի գործունեության և վարքի սոցիալական դրդապատճառներով հայտնի զարգացման մակարդակ:

1. Հիմանխնդրի տարբեր հայեցակետերի տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ մեդիայի ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձնային, հուզական ոլորտի զարգացման վրա պետք է մշտապես վերահսկվի մեծահասակների կողմից, քանի որ երեխաները չեն կարողանում տարբերակել ճիշտ տեղեկատվությունը սխալից, դժվարանում են քննադատաբար մտածել, և ամբողջ տեղեկատվությունն ենթագիտակցորեն յուրացվում է նրանց կողմից, որն էլ նրանց մոտ առաջացնում է շրջապատի խեղաթյուրված պատկեր:
2. Մեդիատեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների ուսուցման համակարգում կբարձրանա հատկապես այն դեպքում, երբ 21-րդ դարի մանկավարժը տիրապետի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Կրթության որակի բարձրացման գործընթացում մեծ է ուսուցչի և ծնողի դերը, ուստի ևեթ պետք է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների ժամանակի ռացիոնալ օգտագործումը՝ ՏՀՏ ոլորտի իրականացման գործընթացում:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալյան Ա. Ա , Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, Լույս ,1983
2. Բերուն Ռ., Ռիչարդ Դ. Ագրեսիա: ՍՊԲ հրատ, Պիտեռ: 1997
3. Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց, Երևան 2018թ.
4. Դ. Էլկոնին, կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Եր. 1975
5. Կրտսեր դպոցականի հոգեբանական հիմնական առանձնահատկությունները, Երևան, 1962
6. Ա.Մ. Մանուկյան ,Հ. Ս. Մուրադյան , Մեդիակրթություն ,Զանգակ
7. Ա.Վ. Պետրովսկի , Ընդհանուր հոգեբանություն, Լույս , Երևան 1977, էջ 125
8. Սերոբյան Արեգ, Տարիքային հոգեբանություն: Երևան: «Լույս» հրատարակչություն: 2002:
9. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր.,1977,էջ91
10. Կ. Դ . Ուշինսկի , Մանկավարժական ընտիր երկեր , Երևան 1988.
11. Аромштам М. Дети смотрят мультфильмы: психолого-педагогические заметки. Практика производства мультфильма в детском саду. — Москва: Чистые пруды, 2006. — 30 с.: — Библиотечка «Первого сентября». Серия «Дошкольное образование»; вып. 2 [8]:
12. Глушкова Е. Телевидение и здоровье детей. Журнал «Дошкольное воспитание», 1989 г. №4.
13. Жижина М.Б. Медиаграматность как стратегическая цель медиаобразования: о критериях оценки медиакомпетентности, Медиаобразование, Media education, 2016.
14. Ивлев А.А. “Экранная культура как социализирующии феномен современного образожания”, г. Оренбург
15. Российская педагогическая энциклопедия, Т.1, Москва, Большая российкая энциклопедия, 1993

14. Смирнова Е. О. И Лаврентьева Т.В. “Как телевидение влияет на детей”

15. http://cito-web.yspu.org/link1/metod/met35/node29.html

16. https://www.idrlabs.com/ru/rorschach/test.php